Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 966 - Ա որոշման

«ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է տեղադրել արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգեր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ բնակավայրում բնակիչների՝ բոլոր 109 առանձնատների տանիքներին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակիչների՝ բոլոր 19 առանձնատների տանիքներին և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Արավուս բնակավայրում բնակիչների՝ բոլոր 34 առանձնատների տանիքներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ բնակավայր, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայր և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Արավուս բնակավայր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 64,807,260 դրամ, որից՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ բնակավայր՝ 43,630,120 դրամ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայր՝ 6,258,300 դրամ և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Արավուս բնակավայր՝ 14,918,840 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ բնակավայրի բնակիչներ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայրի բնակիչներ և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Արավուս բնակավայրի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. նոյեմբերի 25-ից մինչև 2022 թ. մարտի 04-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է տեղադրել արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգեր Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ բնակավայրում բնակիչների՝ բոլոր 109 առանձնատների տանիքներին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակիչների՝ բոլոր 19 առանձնատների տանիքներին և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Արավուս բնակավայրում բնակիչների՝ բոլոր 34 առանձնատների տանիքներին: Արժեքը կազմում է 64,807,260 դրամ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. նոյեմբերի 25-ից մինչև 2022 թ. մարտի 04-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Դավիթ Բեկ բնակավայր՝ 43,630,120 դրամ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի խոշորացված համայնքի Շուռնուխ բնակավայր՝ 6,258,300 դրամ և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Արավուս բնակավայր՝ 14,918,840 դրամ բնակիչների առանձնատների տանիքներին արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման,	Համագործակցություն չի նախատեսվում

	տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկո-ղության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ